

**ԱՄԵՆ. Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ՍՐԲԱՋԱՆ ՀՕՐ ԽՕՍՔԸ Ս. ՅԱԿՈԲԻ ԱՍՊԵՏՆԵՐՈՒ
ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ**

Գերշ. Տ. Յովնան Ս. Արք. Տէրտէրեան
Առաջնորդ Միացեալ Նահանգաց Արեւմտեան Թեմին,
Հոգեշնորհ եւ Արժանապատիւ Հայրեր,
Մեծայարգ Տիար Յարութիւն Այվազեան եւ սիրելի ներկաներ.

Այս երեկոյ, ինծի համար ձեր մէջ գտնուիլը հաճոյք է եւ պատիւ, անձամբ ձեզի փոխանցելու իմ եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան երախտագիտութիւնն ու շնորհակալիքը ձեր այստեղ գտնուելուն, եւ այն բոլորին համար որ ըրիք եւ քաջ գիտեմ որ պիտի շարունակէք ընել, մանաւանդ նախկին Սաղիմահայերը, որոնց համար Երուսաղէմը տակաւին ունի քաղցր իմաստ եւ նշանակութիւն: Նախ պիտի ուզէի յատուկ շնորհակալութիւն յայտնել սիրելի Յովնան Սրբազանին, Պրն. Կանիմեանին, Օհան Ղարիպեանին, Շահէ Պոյաճեանին, Մաշտոց Զօպանեանին եւ Կարինէ Մերկերեանին, որոնք նեցուկ կանգնեցան եւ իրականացուցին գոյութիւնը Սրբոց Յակոբեանց Ասպետներու այս շարժումին:

Հոս պիտի ուզէի շեշտել այն իրողութիւնը, թէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հիմերը դրուած են մեր ժողովուրդի անսասան հաւատքի հիմերուն վրայ, որուն պատերը ամրացած են հայ ուխտաւորներու նուիրուածութեամբ եւ արցունքներով, եւ որուն շուրջ բարեբախտաբար միշտ ներկայ եղած են լէգէոնները այն մեծ եւ բարի հոգիներուն, որոնք իբր մշտարթուն պահակներ կը հսկեն այս նուիրական յարկին եւ ուխտին, որուն գոյութիւնը ետ կ'երթայ մինչեւ Ե. Դար, եւ յետ այդու շարունակուած է անընդհատ, երբեմն ի գին անհնարին զոհողութեանց եւ երբեմն նոյնիսկ արեան:

Դժբախտաբար մինչեւ մեր օրերը տակաւին ունինք իրենց արժանապատուութիւնն ու օրէնքի, պարտականութեան եւ արդարութեան ամէն զգացում կորսնցուցած մարդիկ, որոնք Շէյքսպիրի՝ Մաքպէթի վիուկներուն նման կ'աղմկեն ըսելով. «Լաւը գէշ է եւ գէշը՝ լաւ»: Ասոնք այն պատեհապաշտներն են, որոնք մոռցած իրենց պարտականութիւնները վանքին նկատմամբ կը փորձեն սեպհականացնել այն՝ ինչ որ իրենց չպատկանիր առաջին հերթին: Ասոնք, այս չակերտեալ ազգայնականները, մեր վանական կեանքին կը նային ձիարշաւներու մասնակցող մարդոց մտայնութեամբ, նախապէս ընելով իրենց ընտրութիւնները: Յամենայն դէպս ինչ ալ ուզեն մտածել եւ փորձեն ընել այս շարամիտները, քանզի զիրքն ու բարոյական ոյժը այս հաստատութեան, ան պիտի շարունակէ իր դերը, որ նիւթական ըլլալէ աւելի, հոգեկան է, եւ մարդկային ըլլալէ առաջ՝ Աստուածային, հակառակ այն տխուր իրականութեան՝ որ անցեալին պատահած են անպատուաբեր դէպքեր, որոնք որոշ ժամանակներու համար մթագնած են փառքը այս փառաւոր Հաստատութեան:

Մեր հաւատքը չէ պայմանաւորուած մարդոց քմահաճոյքով, որովհետեւ մենք գիտենք թէ զինուորներն ենք եւ աւանդապահները մեր ժողովուրդի դարաւոր իրաւունքներուն եւ սրբութիւններուն, եւ մենք միշտ հաւատացած ենք ու կը հաւատանք հրաշքին՝ որ մեր Եկեղեցիին է ու ժողովուրդին: Պարոնտէրերու, Շղթայակիրներու եւ անոնց արժանաւոր յաջորդներուն բարի ջանքերով արդիւնաւորուած այս Տունը՝

Ս. Յակոբը, իրական փառք մը եւ մեր ժողովուրդին պատիւ բերող Հաստատութիւն մըն է, որուն միջոցաւ անհամար օտարներ առաջին անգամ ըլլալով կը լսեն ու կը ծանօթանան Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդին:

Երբ իբր հայ կարդանք մեր տոհմային յիշատակարանները, հոն պիտի տեսնենք թէ հայուն համար եկեղեցաշինութենէ աւելի առաքինի եւ սրբազան գործ չէ եղած, վկայ՝ Պատմական Հայաստանը իր հազարաւոր եկեղեցիներով, որոնցմէ քիչեր միայն կառուցուած են թագաւորներու եւ իշխաններու կողմէ, եւ ճիշդ ասոր համար է, որ հայ աղօթասացը ըսած է. «Երանի՛ր եկեղեցի շինողաց, երախտաւորաց եւ պտղատուից»:

Եւ այս բոլորը, որովհետեւ Ս. Աւետարանը հայ գիր կամ մագաղաթ ըլլալէ առաջ եղած է հայ սիրտ մեր կուրծքերուն տակ: Եւ այն եկեղեցիներն ու տաճարները քարէ կառուցներ ըլլալէ աւելի հայուն համար եղած են գոյութեան եւ փրկութեան տապաններ մեր ալեկոծ պատմութեան ընթացքին: Օգնել Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կը նշանակէ սատարել Հայ Եկեղեցիին եւ ազգապահպանման նուիրական գործին, օգնելով Երուսաղէմին դուք ձեր հոգիներն է որ կը հարստացնէք: Հոս տեղին է յիշել եւրոպացի աստուածաբան-իմաստասէրին խօսքը. «Երկու գեղեցիկ բաներ կան տիեզերքի մէջ. մինն՝ աստեղազարդ երկինքն է, որ Աստուած է. իսկ միւսն ալ մարդուն ներսը գտնուող աստեղազարդ երկինքն է՝ որ է պարտականութեան զգացումն ու անոր գիտակցութիւնը»:

Այո՛, պարտականութեան գիտակցութիւնը այդ երկնքի աստղերէն մէկն է, բայց աստղ մը անշուշտ այն ատեն միայն իրա՛ւ աստղ կ'ըլլայ, երբ կարենայ ինքն իրմէ դուրս գալ եւ իր լոյսը տարածել ուրիշներուն վրայ:

Ինչպէս ըսի, իմ ներկայութիւնս սիրելիներ, այսօր ձեր այս պատուական գաղութին մէջ, եղած է յանուն Սրբոց Յակոբեանց Զինուորեալ Միաբանութեան, յայտնելու ձեզի բոլորիդ մեր երախտագիտութիւնը, եւ ի մասնաւորի զարդարելու կուրծքը ազնուական հայորդիի մը, Տիար Յարութիւն Այվազեանին, Ս. Յակոբի Ասպետներու Առաջին Կարգի Շքանշանով, որ անցեալ Ծննդեան տօնին, Երուսաղէմ իր առաջին այցելութեան իսկ ըրաւ ինքնաբոլիս իշխանական իր նուիրատուութիւնը: Թող Տէր Աստուած անփորձ պահէ ու պահպանէ Այվազեան ընտանիքն ու իր պարագաներն ու շատ սիրելի Լոս-Անճըլըսահայութիւնը:

Շնորհակալութիւն

11 Դեկտեմբեր, 2019

